



Տարեկան զինեմ 6 Արծաթ Կենդանի
Վեցամեայ 3 1/2
Մեկ ծանուցումը տողին 2 դուրով է
Ստորագրութիւնները կազմել են:
Չստորագրութիւնները ամսոյն 1ին
եւ 15ին կը սկսին:

Դուրս երթալիք լրագիրներուն համար
ծախքը առհաղիմ վրայ է:
Լրագրոյս վերաբերեալ համակ կամ որ
եւ իցէ գրութիւն Խմբագրին պիտի
ուղղուի. եւ ասոնց համարում ծախ
քը խրհողին վրայ է:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՊՈՏՏՈՒՄ 2 ՓԵՏՏՈՒՄ

ՊՈՐՍԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Մարտի 7 փետր.
Յորին կառավարութիւն, նոյն դէպքէն. — Մե-
տաքս, խոզակիր բանուին: — Ստաւթ թու-
62: — Բոխանակութիւն 24 92 1/2: — Պոտոս
70 20: — Բոխանակութիւն 93:
Երկուշաբթի: Յորին 7 անուր 56 59: —
Արքա 40: — Մարտի 10 փետր.: 44: — Գարի,
Եղիպտոսի, նոյն դէպքէն. — Մետաքս Պարս-
կաստանի, կուզուի: 14: Պոտոս տեսակը 115
12: — Բոխանակութիւն 92 1/2: — Օսմանեան 41:
— Բոխանակութիւն 72 1/2: Նորը 68 1/2:

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ազգայնական շարժումներն ար-
դէն ծանօթ են մեր ընթերցողաց շատե-
րուն: Այս շարժումները հետագային նաեւ
համառոտ տեղեկութիւն մը կուտայ թա-
ղուհիս այս առթիւ ըրած ատենաբա-
նութեան վրայ, որ ինչպէս յայտնի է
Ազգայնական շարժումներն քաղաքականութեան
նկատմամբ համառոտ տեղեկութիւն մը միշտ
պարունակելուն համար ամենուրեք հետա-
քերտութեան առիթ մ'է, մասնաւոր քա-
ղաքական ծանր ինքիւններ յուզուած ժա-
մանակ:

Յիշեալ ատենաբանութիւնը օտար տե-
ղեկութեանց Ազգայնական շարժումները թա-
ղուհիս գոհացուցիչ վիճակի մէջ ըլլալը
յիշե՛ք ետեւ, ներկայ քաղաքական իրող-
րոց մէջ ամենուրեք ուշադրութիւնը գրա-
ւոր հեղինական ինքիւններ վրայ ալ հետեւ
եալ խօսքերը կրնն:

«Ա. Թագուհին վստահութիւն ու-
նի, թէ նոյն զգացումը որ Յունաց ազգը
յորդորեց Աթինայ իշխանի իրենց թագա-
ւոր ընտրելու հաւաքումը հաւանաբար այնպիսի
վիճակներ մը իրենց ընտրելու, որուն կա-
ռավարութեանը ներքեւ Յունաստանի կա-
րող ըլլալ ներքին բարոյութիւն մը վայել-
ելու եւ ուրիշ տեղութեանց հետ ալ բա-
րեկամ մնալու: Եւ թէ որ իրաց այս վի-
ճակին մէջ Յունաստանի երկրի կողմէ հա-
տարակապեցութիւնը հասուն խորհրդ-
գանկութիւններ են ետեւ: Յունաստանի հետ
միանալու փախած յայտնի է, Ա. Թագու-
հին պատրաստ է պէտք եղած միջոցները
ձեռք առնուել 1815 յայտնի զաշնագ-
րութիւնը վերաքննել տալու, որով վիշ-
եալ հաստատակապեցութիւնը իրականա-
կան թագին պաշտպանութեանը ներքեւ
գրուած է: »

Ինտրայէն փետր. 10 (շաա) թուով
հեռագրական լուր մը կը ծանուցանէ թէ
խորհրդարանին մէջ բուռն զանգամանք
կըլնան կառավարութեան դէմ Յունի-
կան կողմէն Յունաստանի տարւոյ վտար
ունենալուն համար:

Նոյն հեռագրալուրը կը ծանուցանէ
նաեւ թէ Լորտ Բալմէրսթըն իմացուցեր
է խորհրդարանին որ Սաքս Բալմէրսթըն
Լորտ Բալմէրսթըն զուրկ վերջնական կերպով մեր-

ժեր է Յունաստանի թագը:

Լորտը այսպէս խօսելով՝ այս մերթ-
ման պատճառով Լորտ Բալմէրսթըն յա-
ռաջ զրաժ մէկ քանի ծանր պայմաններն
են, որ անընդունելի երեւոյթ են պաշտ-
պան տեղութեանց, և հետեւաբար բա-
նակցութիւնները խոր են: Դուք կա-
ռավարի եղեր որ Գաղղիոյ մէջէն դուրս
մը դուք գումարէ, և այն դուքներն լինեն
քի մէջ իրեն պահպանութիւն ընեն: Եւ
պիտի պայման մը՝ որ անվստահութեան և
կասկածի արդիւնք է՝ յոյները չեն կըր-
նար երբեք ընդունիլ:

Ինչ և իցէ, կերելի որ հեղինական
թագը խիստ փշոտ ըլլալով՝ մեկը չուզեր
գլուխը դնել, և ասանկ երթայնէ՝ Յու-
նաստանի դահը դեռ երկար ատեն պա-
րապ պիտի մնայ:

Յունաստանի կողմէ Յունաստանի հետ
միանալուն դէմ եղող կուսակցութիւն-
ներն օր ըստ օրէ կը մեծնայ: Բորիստէն
եկած վերջին լուրերուն նայելով՝ յիշ-
եալ կողմէն մէջ Ազգայնական կառավարու-
թեան ունեցած պոքրերուն համար 150000
և քաղաքական տեսուչներուն համար 40
000, և տարուէ տարի բերքերուն համար
60 000 անդրկական լիւրա ծախք կերթայ
եղեր: ասկէց զատ Ազգայնական ամեն տա-
րի յիշեալ կողմէն պայքարութեան դաշտը
աղիւսակապեցութեան և ինքնուրոյն պաշ-
տօնակարաց համար տարեկան 600 000 լի-
ւրա ծախք երթալով, և այս ամեն ծախ-
քերը կողմէն առեւտրական դարձաց-
մանը մեծապէս նպաստուող ըլլալով,
բնակիչները կը խորհին եղեր որ անդիւս-
տաց պաշտպանութեան ներքեւ ետեւ ժա-
մանակին այս մեծ ծախքին պիտի զրկը-
ւին: Եւ պատճառաւ Բորիստէն ժողովը
որոշեր է որ Յունաստանի հետ միանալու
առաջարկութիւնը չընդունին:

Ի հաստատուն մէջ ծագած արդարա-
բութեան վրայ եկած լուրերն հակառա-
կան են: Բեղաբալուրի լրագրաց խօսքին
նայելով՝ արդէն զգուշացի պէտ է: Իսկ
Ա. ստորին լրագրաց խօսքին նայելով՝ հետ-
զհետէ մեծնալու և տարածուելու վրայ է:
Ստոյգն իմանալու համար յաջորդ
թղթերէն իմանալու պէտք է սպասել:

Հռոմէն գրուած լուրերն համաձայն
կը հաւատեն թէ զինան գաղափարներն
օր քան զօր կը տիրեն Հռոմի արքունեաց
մէջ: Հասկնալ սխալ են վերջնապէս թէ
Լուրագրի հասարակաց կարծիքն այնպի-
սի գործութիւն մ'է որ արհամարհելու չի
զար, և որուն դէմ Հռոմի արքունին
« ոչ կարեմք » զօրաւոր պատուար մը
չկրնար ըլլալ հիմակուան ժամանակ:

« Հռոմի արքունիքը կը ծանցայ,
կըսէ գաղղիական Պրանս լրագիրը, ժողո-
վրդեան հետ ունեցած յարաբերութիւն-
ները փոխելու հարկը: Բայց ժողովրդեան
քուէովը քաղաքական ժողովը անդամներ
ընտրելու չհամարձակիր, վախճալով որ
ընտրական գործողութիւններն իտալական
միութեան նպատակաւ ցոյցերու առիթ
մը կըլնան Հռոմի ժողովրդեան, որոցմէ
շատերը միտք ունին եղեր Ա. երթոր Լա-

մանուէլ խաղաղորին անունը ձգել քուէ-
տու փին մէջ: »

Ամերիկայի արեւմուտ և աշխարհ-
հաւէր պատերազմին վերջ տրուելու հա-
մար Գաղղիոյ կառավարութեան այս օրե-
րը Լորտէն հաշտարար ջանք մը ընելուն
լուրն ստուգուեցաւ: Լորտին գործոց
պաշտօնայ Գ. Տրուէն ար Լուիս պաշ-
տօնական ծանուցադիր մը զրկեց Միաց-
եալ Կահանագոյ նախագահին առաջար-
կելու, որ երկու պատերազմող կողմերն
յանձնաժողով մը գնեն՝ առանց պատե-
րազմը դադարեցնելու կամ գնահատար
ընելու, և այն յանձնաժողովին մէջ եր-
կու կողմն իրաւունքն ու պահանջում
ները վիճակելով՝ իրաւախոհութեան հի-
մեր գտնուին, որոց վրայ կարելի ըլլայ եր-
կու կողմէն համաձայնեցնելով խաղաղու-
թիւն հաստատել:

Ազգայնական լրագիրները կը գովեն Գաղ-
ղիոյ կառավարութեան այս մարդասիրա-
կան ջանքը, բայց յաջորդութիւնը կեղա-
կարծ կը թուի իրենց:

Չորեքշաբթի իրիկուն Լ. Գաղղիոյ
հեռագրով լուր եկաւ թէ Լորտ Բալ-
մէրսթըն հրահրացեր է և իր վիճակը
բաւական երկիւղ կուտայ:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՊՈՏՏՈՒՄ ԱԶԳԱՅԻՆ ՓԵՏՏՈՒՄ

Ա. ամենայն լրագիրս Օսմանեան տեղութեան

Բ. Դուռը լրագրաց ոմանց էջե-
րուն մէջ լրագրութեան պատուոյն և առ-
հասարակութիւնն ունեցած պարտ ու
պատշաճ յորդանքուն հակառակ յաճա-
խակի տեսնուած բանալիներն ու անձ-
նականի դէմ խօսքերը բացարձակ կերպիւ
դադարեցնելու ուղեով, յատուկ որոշմամբ՝
այս օրէն սկսեալ կարգիլ լրագրաց իրա-
րու դէմ ըրած այն ամեն վիճարանու-
թիւնները՝ որոնք լրագրութեան սահ-
մաններուն մէջ ծառուելիք ընդհանուր
շահուն վերաբերեալ ինքիւններու համար
չլրացող անձնականի կամ առանձնական
մասնաւոր իրողութիւններու կը վերաբե-
րին:

Եւ որոշման հակառակ վարուող որ
և իցէ լրագիր՝ առանց խտրութեան՝ աղ-
գարարութիւններու կանոնական պատժոյն
ենթակայ պիտի ըլլայ:

Բ. Գրուին 54 յունի. 1863:

Օսմանեան արուեստահանութիւն չէն-
քը գրելով լրագրաց է, և դալ շարժու-
զարդարութիւն կ'սկսի:

Արուեստահանութիւն վերադառնալ
յանձնաժողովը Լուրագրի գաղղի երկրա-
գործական մեքենայներն ու գործիքները
բանեցնելու համար մայրաքաղաքի շրջա-
կանները հոգիւր որոշեց, ուր եւրոպական
արդիւնքը, ցանիչ գործիքները, տափան-
ները և այլն պիտի փորձուին Տաճկաստան-
ցի երկրագործներու աչքին առջև:

Հանձնաժողովին այս անօրէնութիւն-
նը գոհութեամբ կը հրատարակենք իր-

րու արուեստահանութեան գործնականագիտ-
արդիւնաւոր ընելու գլխաւոր միջոցներէն
մէկը. և տարակոյս չկայ որ ասանկով յառա-
ջեկայ արուեստահանութեան իսկապէս
ազգայնութիւն մը պիտի ունենայ Տաճ-
կաստանի արուեստներուն և երկրագոր-
ծութեան վրայ:

Թերթիւմանը Ա. Գաղղիոյ մէջ հետեւ-
եալ կը կարդանք:

« Անցեալները կայսերական գանձուն
հաշիւներուն մէջ քանի մը խտրախո-
թիւններ գտնուելով, հաշուաւարութեան
վերադառնալուն իրենց պաշտօնէն հան-
ուել, և հաշիւները կարգի գրուելու հա-
մար յանձնաժողով մը կազմուելով, անց-
եալ տարիներուն քանի մը ամսուան հա-
շիւները չնուեր, 15 հազար քաղկէն ա-
ւելի գրաւագրուի (պոնթո) վրաս գրու-
նուեր էր: »

« Եւ լսենք որ նոյն հաշիւներն ամբող-
ջապէս քննուելու և անոնց պատճառաւ
ծագելիք դատերն Արդարութեան բարձ-
րագոյն ատենին մէջ տեսնուելու համար
կայսերական բարձր հրաման մը ելած է: »

Կայսերական հրամանաւ:
Մեր լիւր Գաղղի փաշան Ալեհա-
նէի զինուորական դարձոյն (Խաւաթիյէ)
վերադառնալ անուանեցաւ:

Պիղայի նախորդ կառավարիչ Հա-
սան փաշան Ֆիլիպէի կառավարիչ ան-
ուանեցաւ:

Դարձեալ կայսերական հրամանաւ:
Բարձրագոյն Գրուած փաշան պա-
տերազմական գործոց պաշտօնայ անուա-
նեցաւ:

ԱԶԳԱՅԻՆ

ՊՈՏՏՈՒՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Կեսարիոյ Տ. Մարտիրոս քահանային նը-
կատմամբ յառաջագոյն տրուած ալ և սղ
բողոքներուն վրայ թէ և յայտարարութիւն
եղած է որ սոյն քահանային դատը համադու-
մար կրօնական ժողովոյ միջոցաւ պիտի տես-
նուի, սակայն ամբաստանութեանց հիմը բո-
ղոքարկուեաց երեւակայած կարեւորութիւնը
չունենալուն, և արդէն ասոնց գլխաւոր կէ-
տը Կեսարիոյ Գեր. Առաջնորդին եւ քահանային
մէջ տիրած վաղեմի անհամաձայնութեան ու
գծտուութեանը նկատմամբ ըլլալուն, արժան
դատուեցաւ նախ այս մասին Գեր. առաջնոր-
դին գիմել և Տ. Մարտիրոսի մատուցած զըզ-
ջական աղերսագրին տալիք պատասխանին
սպասել:

Արդ՝ Կեսարիոյ Գեր. առաջնորդը քրիս-
տոնէական շնորհամտութեամբ հաճեցաւ
յիշեալ Տ. Մարտիրոս քահանային աղերսա-
նաց ունիղիւր ըլլալ, և անոր իւր նկատմամբ
բռնած քանի մը անխոհական ընթացիկ ներկե-
լով իւր ձեռագիր վկայարարով հրաման տալ
որ իւր քահանայական պաշտօնը ամեն ուրեք
կատարէ:

Այս ներողական գրոյս վրայ, ի պաշտօնէ
յայտնել հարկ կըլլայ որ Տ. Մարտիրոս քա-
հանայն արդէն իւր վրայ եղած ամբաստանու-
թիւններէն ազատ և և իւր կրօնական պարտա-
ւորութիւնները շարունակելու կարող է:

Ս. Գրիգի հիւանդանոցին բժիշկ Տօքթոր
Չայանը իւր հրաժարականը մատուցած ըլլա-

